Հաստատված
«ՀՖՄՊԻ» Հիմնադրամի
Գիտական խորհրդի
2025թ. մարտի 30-ի N129-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգի նպատակը «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) բուհական կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրերով ուսումնառող ասպիրանտների ընդունելության, հայցորդների ձևակերպման, ուսումնառության, ասպիրանտների և հայցորդների հետազոտական գործունեության կազմակերպման հետ ինստիտուտի հարաբերությունների կանոնակարգումն է:

2. Սույն կարգի իրավական հիմքերն են ՀՀ կառավարության 25.02.2016թ.-ի N238-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման» կարգը, ՀՀ Կրթության և գիտության նախարարության 13.04.2017թ.-ի «Հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա և հայցորդություն) կրեդիտային համակարգի ներդրման մասին» N371 հրամանը, «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները:

3. Սույն կարգով չկանոնակարգված կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրով իրականացվող գործառույթները կարող են կանոնակարգվել ինստիտուտի գիտական խորհրդի կողմից ընդունված առանձին որոշումներով:

2. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Ինստիտուտի ասպիրանտուրա մրցույթային հիմունքներով կարող են ընդունվել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող անձինք:

5. Ասպիրանտուրայում ընդունելությունն իրականացվում է առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Անվճար հիմունքներով ընդունելությունը ինստիտուտի ասպիրանտուրայում իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ՝ անվճար) տեղերի շրջանակներում և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ժամկետներում:

6. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (այսուհետ՝ վճարովի) տեղերի համար ասպիրանտուրայի ընդունելությունն իրականացվում է յուրաքանչյուր տարվա օգոստոս-սեպտեմբեր ամիսներին:

7. Ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար ինստիտուտի ռեկտորի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով՝ ինստիտուտի ռեկտորի կամ ուսումնագիտական գծով պրոռեկտորի նախագահությամբ, Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնի ղեկավարի մասնակցությամբ:

8. Ինստիտուտի ասպիրանտուրա ընդունվելու համար դիմորդը կամ նրա լիազորած անձը պետք է ներկայացնի դիմում ինստիտուտի ռեկտորի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին).

2) օտար լեզվի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ).

3) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը, կամ հրատարակված գիտական աշխատանքների ցուցակ, կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում.

4) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի).

5) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

Դիմումներն ընդունվում են Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնում: Դիմումի ձևը, հրատարակված գիտական աշխատանքի (աշխատանքների) ցուցակը, կամ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը, կամ գիտական ռեֆերատ: Ռեֆերատի տիտղոսաթերթն ու մշակելու պահանջները ներկայացված են սույն կարգի N1, N2, N3 և N4 հավելվածներում:

9. Գիտական ռեֆերատը պետք է ներկայացվի ընտրված մասնագիտությամբ, սույն կարգի N4 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան, որն ուղարկվում է համապատասխան մասնագիտական ամբիոն կամ ինստիտուտի առաջատար գիտնականներից մեկի գրախոսման:

10. Սույն կարգի N4 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում գիտական ռեֆերատը չի ընդունվում, իսկ դիմորդի մասնակցությունը ասպիրանտուրայի ընդունելությանը մերժվում է:

11. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման համար ինստիտուտի ռեկտորի հրամանով ստեղծվում է մասնագիտական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվում են տվյալ մասնագիտական բնագավառի գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող երեքից հինգ մասնագետ:

12. Ինստիտուտի հայտարարությունների համար նախատեսված վայրում փակցվում և պաշտոնական կայքում ու ֆեյսբուքյան էջում տեղադրվում են մասնագիտական քննության

1) անցկացման օրվա, տեղի, ժամի, քննության անցկացման ձևի վերաբերյալ տեղեկատվություն՝ քննությունը սկսելուց առնվազն յոթ աշխատանքային օր առաջ,

2) հարցաշարը՝ մասնագիտական քննությունից առնվազն մեկ ամիս առաջ,

3) ընթացակարգային պահանջները՝ սահմանված սույն կանոնակարգով:

Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությանը մասնակցելու թույտվությունը դիմորդներին տալիս է ինստիտուտի ասպիրանտուրայի ընդունող հանձնաժողովը՝ օտար լեզվից ստացած համապատասխան միավորը հավաստող վկայականի և (կամ) տեղեկանքի առկայության, ինչպես նաև ընտրված մասնագիտությանը համապատասխան գիտական ռեֆերատի մասին մասնագիտական ամբիոնի գրավոր դրական գրախոսականի կամ ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եվ գիտության կոմիտեի կողմից ընդունելի գրախոսվող գիտական ամսագրերում հրատարակված գիտական աշխատանքի (աշխատանքների) պատճենի ներկայացման հիման վրա:

13. Հրատարակված գիտական աշխատանքի (աշխատանքների) ցուցակում անհրաժեշտ է ներառել միայն ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եվ գիտության կոմիտեի կողմից ընդունելի գրախոսվող պարբերականներում հրապարակումները, այլ հրապարակումները ընդունող հանձնաժողովի կողմից չեն դիտարկվում և չեն կարող հիմք հանդիսանալ ասպիրանտուրայի ընդունելության քննությանը մասնակցելու համար:

14. Մասնագիտական քննության հարցաշարը, որն ընդգրկում է նախորդ կրթական աստիճանների ծրագրային նյութը, կազմվում է ինստիտուտի մասնագիտական ամբիոնների և հաստավում ինստիտուտի ռեկտորի կողմից:

15. Հրապարակված հարցաշարից մասնագիտական քննությունից 2 աշխատանքային օր առաջ կազմվում է հարցատոմսեր, որոնք հաստատվում են մասնագիտական քննական հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և ինստիտուտի կնիքով: Հարցաշարը և հարցատոմսերը յուրաքաչյուր տարի վերանայվում են:

16. Դիմորդը քննության է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:

17. Մասնագիտական քննության անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) սահմանում է քննական հանձնաժողովը:

18. Բանավոր քննությունը ձայնագրվում է, և ձայնագրությունը պահպանվում է արդյունքների հրապարակումից հետո առնվազն 24 ժամ: Գրավոր քննության աշխատանքները պահվում է դիմորդի անձնական գործերում:

19. Մասնագիտական քննության արդյունքները գնահատվում են 20 (քսան) միավորանոց սանդղակով: Քննությունը համարվում է հանձնված, եթե դիմորդը ստացել է առնվազն 13 (տասներեք) միավոր: Գիտելիքների գնահատման մասին որոշումն ընդունվում է մասնագիտական քննական հանձնաժողովի առանձին անդամների կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականի հիման վրա:

20. Մասնագիտական քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգը հետևյալն է.

1) Դիմորդը կարող է մասնագիտական քննության գնահատականը բողոքարկել բողոքարկման հանձնաժողովին արդյունքների հրապարակումից հետո՝ մեկ ժամվա ընթացքում՝ մասնագիտական քննական հանձնաժողովի նախագահին ներկայացնելով գրավոր դիմում-բողոք, որը քննարկվում է նույն օրը:

2) Բողոքարկմանը մասնակցում են տվյալ մասնագիտական քննական հանձնաժողովի անդամ չհանդիսացող ինստիտուտի առաջատար գիտնականների, Ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչներ, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են Ինստիտուտի ռեկտորի կողմից՝ 3-5 անդամ: Բողոքարկման հանձնաժողովի նախագահը նույն մասնագիտական քննական հանձնաժողովի նախագահն է:

3) Դիմորդի ներկայությամբ ուսումնասիրվում և քննարկվում է գրավոր աշխատանքը, իսկ բանավոր քննության դեպքում՝ լսվում ձայնագրությունը:

4) Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, բողոքարկման հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝ գնահատականը թողնել անփոփոխ, գնահատականը բարձրացնել:

5) Ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է բողոքարկման հանձնաժողովի նախագահի, Ինստիտուտի առաջատար գիտնականի, Ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչների և դիմորդի կողմից:

6) Նշված անձանցից որևէ մեկի՝ ընդունված որոշման վերաբերյալ անհամաձայնության դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը: Անկախ դրանից որոշումը ստանում է օրինական ուժ:

7) Գնահատականի վերանայման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն:

8) Մասնագիտական քննության գնահատականը կարող է բողոքարկվել դատարանում՝ օրենքով սահմանված կարգով:

21. Մասնագիտական քննության վերահանձնում չի թույլատրվում:

22. Ասպիրանտուրայի մասնագիտական քննության արդյունքն ուժի մեջ է Ինստիտուտի տվյալ ուսումնական տարվա ընդունելության քննության ընթացքում:

23. Մրցույթի արդյունքում ասպիրանտուրա ընդունվում է մասնագիտական քննությունից առավելագույն միավոր ստացած անձը:

24. Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշները՝ ըստ հերթականության՝

1) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ընդհանուր միջին որակական գնահատականը,

2) բակալավրի և մագիստրոսի միջին որակական գնահատականների գումարը,

3) հրատարակված գիտական աշխատանքների թիվը,

4) միջազգային, հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ հանրապետական, ~~կամ~~ միջազգային կամ ինստիտուտի գիտաժողովներին մասնակցության քանակը (զեկուցումները):

25. Ընդունող հանձնաժողովը մրցույթի արդյունքների հիման վրա յուրաքանչյուր դիմորդի վերաբերյալ ընդունում է համապատասխան որոշում:

26. Ասպիրանտուրա ընդունվելու կամ մրցույթով չանցնելու վերաբերյալ որոշման մասին դիմորդներն իրազեկվում են մասնագիտական քննությունից հետո 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:

27. Ասպիրանտուրայի ընդունելության քննության արդյունքներով բոլոր կրթաձևերում ընդունված ասպիրանտների հրամանագրումը կատարվում է ինստիտուտի ռեկտորի հրամանով, որից հետո ասպիրանտի հետ կնքվում է համապատասխան պայմանագիր՝ ըստ սույն կարգի N11 հավելվածի:

28. Ասպիրանտուրայում առկա ձևով ուսման տևողությունը 3 տարի է, իսկ հեռակա ուսուցման ձևով ուսուցման տևողությունը՝ 4 տարի:

29. Առկա ուսուցման ասպիրանտուրայում ուսանելու ժամանակը համարվում է գիտամանկավարժական ստաժ:

30. Ինստիտուտը պարտավոր է անվճար սովորող ասպիրանտին ուսումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում տեղավորել աշխատանքի համապատասխան մասնագիտությամբ՝ հետազոտողի, դասախոսի (կամ ասիստենտի) պաշտոնում:

31. Սույն կարգի 31-րդ կետի պահանջները չեն տարածվում վճարովի ուսուցման ասպիրանտուրայում սովորողների և ատենախոսությունը սահմանված ժամկետում չպաշտպանած մասնագետի վրա:

32. Անվճար ուսումնառած և ավարտած ասպիրանտը պարտավոր է առնվազն 3 տարի աշխատել ինստիտուտում, իսկ աշխատանքից հրաժարվելու դեպքում պարտավոր է ինստիտուտին փոխհատուցել ուսումնառության տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իր ուսումնառության հետ կապված ծախսերը:

33. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) սովորող ասպիրանտները ստանում են պետական կրթաթոշակ:

34. Առկա ուսուցման ասպիրանտին ուսման ընթացքում յուրաքանչյուր տարում տրվում է երկամսյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ:

3. ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

35. Ինստիտուտում հայցորդություն կարող են ձևակերպել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող անձանց:

36. Հայցորդության ձևակերպումը ինստիտուտում իրականացվում է տարվա ընթացքում 2 անգամ՝ սեպտեմբեր և հունվար ամիսներին:

37. Հայցորդության ձևակերպման համար փաստաթղթերի ընդունելությունը կատարում է ինստիտուտի Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժինը: Հայցորդության փաստաթղթերի ընդունելու վերաբերյալ ինստիտուտի պաշտոնական կայքէջում ընդունելությունից 1 ամիս առաջ տրվում է հայտարարություն:

38. Ինստիտուտում հայցորդության ձևակերպման համար դիմորդի կամ նրա լիազորված անձի կողմից անհրաժեշտ է ներկայացնել դիմում ինստիտուտի ռեկտորի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.

1) անձը հաստատող փաստաթուղթ

2) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները, իսկ օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին,

3) հրատարակված գիտական աշխատանքների ցուցակը, կամ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճեն, կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ առնվազն 20 էջի սահմաններում,

4) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

5) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3x4 չափսի),

6) քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմորդն աշխատում է):

Դիմումներն ընդունվում են Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնում: Դիմումի ձևը, հրատարակված գիտական աշխատանքի (աշխատանքների) ցուցակը, գիտական ռեֆերատի տիտղոսաթերթն ու ռեֆերատի մշակման պահանջները ներկայացված են սույն կարգի N1, N2, N3 և N4 հավելվածներում:

39. Հրատարակված գիտական աշխատանքի (աշխատանքների) ցուցակում անհրաժեշտ է ներառել միայն ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եվ գիտության կոմիտեի կողմից ընդունելի գրախոսվող պարբերականներում հրապարակումները, այլ հրապարակումներն ինստիտուտի կողմից չեն դիտարկվում և չեն կարող հիմք հանդիսանալ հայցորդության ձևակերպման համար:

40. Գիտական ռեֆերատը պետք է ներկայացվի ընտրված մասնագիտությամբ, սույն կարգի N4 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան, որն ուղարկվում է համապատասխան մասնագիտական ամբիոն գրախոսման, կամ ինստիտուտի առաջատար գիտնականներից մեկին:

41. Սույն կարգի N4 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում ռեֆերատը չի ընդունվում:

42. Գիտական ռեֆերատի մասին մասնագիտական ամբիոնի գրավոր դրական գրախոսականի կամ ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եվ գիտության կոմիտեի կողմից ընդունելի գիտական ամսագրերում հրատարակված գիտական աշխատանքի (աշխատանքների) և անհրաժեշտ այլ փաստաթղթերի ներկայացման հիման վրա, ինստիտուտի ռեկտորի հրամանով դիմորդը հրամանագրվում է՝ որպես հայցորդ: Ատենախոսության թեման հաստատելու հիմքերի բացակայության դեպքում (բնագավառի գիտության դոկտորի բացակայություն) թեման հաստատվում է այլ բուհում: Հայցորդի հետ կնքվում է համապատասխան պայմանագիր (հայցորդների հետ կնքվող պայմանագրի ձևը ներկայացված է սույն կարգի N11 հավելվածում):

43. Երկամսյա ընթացքում ատենախոսության թեման և գիտական ղեկավարի թեկնածությունը քննարկվում և երաշխավորվում է ամբիոնի նիստում, ֆակուլտետի գիտական խորհրդում, որից հետո՝ հաստատվում ինստիտուտի գիտական խորհրդում: Ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի փոփոխությունն իրականացվում է նույն ընթացակարգով:

44. Ինստիտուտում հայցորդությունն իրականացվում է վճարովի հիմունքներով, առավելագույնը 5 տարի տևողությամբ:

4. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ)

45. Ինստիտուտում ասպիրանտի ու հայցորդի ուսումնառությունն ենթադրվում է, որ նա.

1) պետք է ունենա ինստիտուտի գիտական խորհրդի կողմից հաստատված ատենախոսության թեմա և գիտական ղեկավար.

2) պետք է մասնակցի ուսումնական ծրագրով նախատեսված դասընթացներին և հանձնի քննությունները, կուտակի համապատասխան կրդիտները և համապատասխան ամբիոնում անցկացնի ատենախոսության նախնական փորձաքննություն:

3) յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական ամբիոնում պետք է անցնի պարտադիր ատեստավորում:

46. Որպես ասպիրանտ կամ հայցորդ հրամանագրվելուց և ռեկտորի հետ պայմանագիր կնքելուց հետո եռամսյա ժամկետում հետազոտողը պետք է ներկայացնի տվյալ մասնագիտության համար ինստիտուտի գիտական խորհրդի կողմից հաստատված ուսումնահետազոտական աշխատանքի պլանի հիման վրա գիտական ղեկավարի և ասպիրանտի կամ հայցորդի կողմից մշակված ուսումնահետազոտական աշխատանքների անհատական և հետազոտական աշխատանքի անհատական պլաններ (Հավելված 6):

47. Գիտական ղեկավար կարող են նշանակվել տվյալ բնագավառի գիտության դոկտորները և այն թեկնածուները, որոնք տվյալ թվանիշով ստացել են ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եվ գիտության կոմիտեի կողմից ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն: Գիտական ղեկավարի թեկնածությունը որոշվում է ասպիրանտի/հայցորդի և գիտական ղեկավարի փոխադարձ համաձայնությամբ: Ասպիրանտի գիտական ղեկավար առաջնահերթ կարող է նշանակվել այն դասախոսը, ով վերջին 3 տարում ունի հրատարակում Scopus և Web of Science գիտական հարթակներում:

48. Ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ որոշման մասին ինստիտուտը տեղեկացնում է ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եվ գիտության կոմիտեին:

49. Ինստիտուտում ասպիրանտների ուսումնառությունն ու հայցորդների հայցորդությունն իրականացվում է կրեդիտային համակարգով:

50. Ասպիրանտուրայում ուսուցման և հայցորդության լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի, որը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝

կրթական և հետազոտական: Ծրագրի 50 կրեդիտը նախատեսված է կրթական բաղադրիչի, իսկ 130 կրեդիտը՝ հետազոտական բաղադրիչի համար: Կրթական բաղադրիչը ենթադրում է պարտադիր դասընթացներ և քննություններ՝ 30 կրեդիտ ընդհանուր ծավալով և ընտրովի դասընթացներ՝ 20 կրեդիտ ընդհանուր ծավալով՝

Մեկ կրեդիտը համարժեք է ասպիրանտի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը: Դրանք բաշխվում են հետևյալ կերպ՝

1) մասնագիտական քննություն ատենախոսության թեմայի թվանիշով՝ 8 կրեդիտ,

2) գիտական հետազոտության մեթոդաբանություն (32 ժամ)՝ 4 կրեդիտ,

3) մասնագիտական օտար լեզու (32 ժամ)՝ 4 կրեդիտ,

4) տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ (32 ժամ)՝ 4 կրեդիտ,

5) պրակտիկա՝ 10 կրեդիտ:

51. Կրթական բաղադրիչի ընտրովի դասընթացներ բաժինը ընդհանուր ուսումնառության ընթացքում նախատեսում է ընդամենը 6 դասընթաց (յուրաքանչյուր կիսամյակում առավելագույնը 3 դասընթաց)՝ յուրաքանչյուրը 16 ժամ ընդհանուր ժամաքանակով և գումարային 20 կրեդիտ ծավալով: Դասընթացների ընտրություն ասպիրանտը/հայցորդը կատարում է յուրաքանչյուր դասընթացի ուսումնառության նախորդող կիսամյակում, բացառությամբ 1-ին կիսամյակը:

52. Ասպիրանտները և հայցորդները ուսումնական պլանի կրթական բաղադրիչի սահմանված կրեդիտները վաստակում են դասընթացի վերջնարդյունքները հաջողությամբ յուրացնելու և գնահատականի դրական շեմն ապահովելու դեպքում:

53. Կրթական ծրագրի հետազոտական բաղադրիչով պայմանավորված կրեդիտները ասպիրանտները և հայցորդները վաստակում են հետազոտական գործունեության հիման վրա, որը ներառում է.

1) «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 1-րդ կետով սահմանված պահանջներով և նվազագույն քանակով ատենախոսության թեմայի շրջանակներում հրապարակումներ՝ 30 կրեդիտ,

2) տարեկան ատեստավորումներ՝ 20 կրեդիտ,

3) ատենախոսություն և վերջինիս վերաբերյալ համապատասխան ամբիոնի դրական եզրակացությունը՝ 80 կրեդիտ:

54. Ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ասպիրանտը և հայցորդը պետք է վաստակեն ուսումնական պլանով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը:

55. Ուսումնառության ծրագիրը հաջողությամբ ավարտելու և անհրաժեշտ կրեդիտներ հավաքելու դեպքում ասպիրանտը և հայցորդը ստանում է հետազոտողի որակավորում և նրան տրվում է համապատասխան ակադեմիական տեղեկագիր:

5. ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

56. Ինստիտուտի ասպիրանտներն ու հայցորդներն պետք է հանձնեն մասնագիտական քննություն ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հաստատված ծրագրով և հարցաշարով:

57. Մասնագիտական քննության հարցաշարը կազմվում է մասնագիտական ամբիոնի կողմից և չի կարող նույնությամբ կրկնել ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության հարցաշարը, որի պատասխանատուն մասնագիտական ամբիոնն է:

58. Քննությունը կազմակերպվում է 2 քննաշրջանով՝ ապրիլ-հունիս և հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Քննության ընթացքում յուրաքանչյուր հայցորդի համար լրացվում է արձանագրություն, որտեղ գրանցվում են քննական հարցերը և քննության վերջնական արդյունքը:

59. Մասնագիտական քննության կազմակերպման համար ինստիտուտի ռեկտորի առաջարկությամբ ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եվ գիտության կոմիտեի նախագահի հրամանով ձևավորվում է քննական հանձնաժողով: Հանձնաժողովը հաստատվում է հետևյալ կազմով՝ նախագահ (գիտության դոկտոր) և 2-4 անդամներ (գիտության դոկտոր և թեկնածու): Մեկ անձը կարող է լինել միայն մեկ հանձնաժողովի անդամ:

60. Մասնագիտական քննության անցկացման ժամանակացույցը հաստատում է ինստիտուտի ռեկտորը:

61. Մասնագիտական քննությունը գնահատվում է 4 բալային համակարգով՝ «գերազանց», «լավ», «բավարար» և «անբավարար»: Քննությունը համարվում է հանձնված «գերազանց» կամ «լավ» գնահատականի դեպքում: Արձանագրությունը ստորագրում են քննական հանձնաժողովի նախագահը և անդամները: Արձանագրությունը պահվում է Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնում, որը և տալիս է տեղեկանք քննության հանձնման մասին:

62. Մասնագիտական քննությունը չհանձնելու դեպքում ասպիրանտը կամ հայցորդը կարող է այն հանձնել հաջորդ քննաշրջանում:

63. Պարտադիր և ընտրովի դասընթացների գնահատման համար՝ բացառությամբ մասնագիտական քննության, կիրառվում է գնահատման 100 միավորային համակարգ: Քննությունը համարվում է հանձնված 60 և բարձր միավորի դեպքում: Գնահատման սանդղակը ներկայացվում է սույն կարգի N 5 հավելվածում:

64. Վեցամսյա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող ասպիրանտը և հայցորդը իր ցանկությամբ կարող է չմասնակցել պրակտիկային և պրակտիկայի կրեդիտներ կուտակել՝ ներկայացնելով համապատասխան տեղեկանք աշխատանքի վայրից:

65. Տարվա ընթացքում հանձնած քննությունների, պրակտիկայի, մասնագիտական քննության, հրապարակված հոդվածների և ատենախոսության վրա կատարված աշխատանքի արդյունքներով ձևավորվում է ասպիրանտի և հայցորդի ատեստավորման վերջնական կրեդիտային պատկերը:

6. ԱՍՊԻՐԱՆՏԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

66. Ասպիրանտները և հայցորդները յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին գիտական ղեկավարի հետ ամբիոն են ներկայացնում հաշվետվություն՝ կցելով համապատասխան նյութերը (հավելված 7), որի հիման վրա պարտադիր ատեստավորում են անցնում ամբիոնի կողմից:

67. Ասպիրանտները և հայցորդները յուրաքանչյուր տարվա ատեստավորման համար ներկայացնում են անհատական պլանով նախատեսված աշխատանքների կատարողականը:

68. Տարեկան ատեստավորման համար ասպիրանտներն ու հայցորդները յուրաքանչյուր ուսումնական տարում պետք է կուտակեն անհատական աշխատանքային պլանի կրթական և հետազոտական բաղադրիչներով նախատեսված տարեկան կրեդիտների անհրաժեշտ նվազագույն քանակը:

69. Ատեստավորումը չանցած ասպիրանտը կամ հայցորդը հեռացվում է ինստիտուտից՝ ռեկտորի հրամանով:

70. Ատեստավորում չանցնելու հիմքերն են.

1) ասպիրանտի կամ հայցորդի անհատական պլանով նախատեսված անհրաժեշտ կրեդիտները մեկ ուսումնական տարվա ընթացքում չհավաքելը,

2) ուսումնառության վերջին կիսամյակում մասնագիտական քննությունից բացասական գնահատական (բավարար կամ անբավարար) ստանալը,

3) կրթական ծրագրերի մյուս դասընթացների (պարտադիր և ընտրովի քննություններին) բացասական գնահատական ստանալը:

4) պրակտիկային չմասնակցելը,

5) վճարովի հիմունքներով սովորող ասպիրանտների և հայցորդների պարագայում՝ ուսման վարձը չվճարելը,

6) ասպիրանտների և հայցորդների այլ պարտականությունները չկատարելը:

71. Ինստիտուտից հեռացված ասպիրանտներն ու հայցորդները կարող են վերականգնվել առնվազն մեկ կիսամյակ հետո, անվճար սովորող ասպիրանտի դեպքում՝ միայն վճարովի հիմունքներով:

7. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՅՑՈՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

72. Հետազոտողի ուսումնահետազոտական աշխատանքների պլանով նախատեսված պրակտիկան իրականացվում է 6-շաբաթյա տևողությամբ:

73. Ասպիրանտը, հայցորդը և գիտական ղեկավարը որոշում են ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանով նախատեսված պրակտիկայի ձևը (մանկավարժական/հետազոտական), անցկացման ժամանակահատվածը և վայրը՝ հաշվի առնելով մասնագիտական առանձնահատկությունները:

74. Պրակտիկան սկսելուց առաջ պրակտիկայի պատասխանատուի կողմից հետազոտողին են տրամադրվում պրակտիկայի ավարտին ներկայացվող հետևյալ փաստաթղթերի նմուշները պրակտիկայի աշխատանքային անհատական պլան (հավելված 8), բնութագիր պրակտիկայի անցկացման վայրից, ասպիրանտի, հայցորդի հաշվետվություն (հավելված 9):

8. ԱՍՊԻՐԱՆՏԻ/ՀԱՅՑՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

75. Ինստիտուտում բուհական կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրով ընդունված և ուսումնառող ասպիրանտներն ու հայցորդները իրավունք ունեն.

1) առաջադրելու ատենախոսության թեմա

2) անվճար օգտվելու ինստիտուտի գրադարանից, ընթերցասրահներից և լաբորատորիաներից,

3) մասնակցելու ամբիոնի նիստերին քվեարկության ձայնով, ինստիտուտի և ամբիոնի գիտահետազոտական աշխատանքներին, ներբուհական, հանրապետական և միջազգային գիտաժողովներին, սեմինարներին, կլոր սեղաններին և այլն՝

4) մասնակցելու ներբուհական, հանրապետական և միջազգային դրամաշնորհային ծրագրերի,

5) դադարեցնել ուսումնառությունը և զորակոչվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության, իսկ զորացրվելուց հետո ներկայացնելլ դիմում ասպիրանտի կամ հայցորդի իրավունքները վերականգնելու համար,

6) ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ գտնվել երկամսյա արձակուրդում՝ կրթաթոշակի պահպանմամբ,

7) ուսումնառությունը դադարեցրած ասպիրանտը կամ հայցորդը, անկախ դադարեցման պատճառներից, վերականգնելու իր ուսանողական իրավունքները:

76. Ինստիտուտում ուսումնառող ասպիրանտներն ու հայցորդություն ձևակերպված հայցորդներն պարտավոր են.

1) ինստիտուտի հետ կնքել պայմանագիր,

2) կատարել ինստիտուտի ներքին կարգապահական կանոնների և ներքին իրավական ակտերի պահանջները,

3) հաճախել դասախոսություններին և մասնակցել պրակտիկային,

4) ժամանակին և բարձր մակարդակով կատարեն անհատական պլանով նախատեսված աշխատանքները,

5) ժամանակին ներկայացնել գիտական ղեկավարին կատարված առաջադրանքները,

6) ուսումնական տարվա ավարտին ներկայացնել գիտական ղեկավարին և ամբիոնին տարվա ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը,

7) մասնակցել ամբիոնի նիստերին,

8) խնամքով վերաբերվել ինստիտուտի գույքին և այլ սեփականությանը:

77. Վճարովի ուսուցման համակարգում ուսումնառող ասպիրանտներն ու հայցորդները պարտավոր են վճարել յուրաքանչյուր կիսամյակի սահմանված ուսման վարձը պայմանագրով նախատեսված ժամկետներում:

78. Մեկ ուսումնական տարվա համար սահմանված ուսման վարձը չվճարած ասպիրանտը/ հայցորդը հեռացվում է ինստիտուտից:

79. Ուսման վարձը ենթակա չէ փոփոխության ուսումնառության պայմանագրով նախատեսված ողջ ժամանակահատվածի համար՝ բացառությամբ այն դեպքը, երբ վերականգնումից առաջ բուհում փոխվել է ուսման վարձավճարի չափը:

80. Ասպիրանտի և հայցորդի հեռացման, կամ ազատման դեպքում վճարված ուսման վարձը ենթակա չէ վերադարձման:

81. Եթե վճարովի հիմունքներով ուսումնառող ասպիրանտը կամ հայցորդը հեռացվել է ուսման վարձը չվճարելու պատճառով, ապա վերականգնման ժամանակ նախքան հրամանագրումը, պարտավոր է վճարել նախկինում հաշվեգրված պարտքը և տվյալ կիսամյակի կամ ամսվա համար նախատեսված ուսման վարձը:

Հավելված N1

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի
ռեկտոր՝ _____

_____
_____ ինստիտուտի
_____ թվականի մագիստրատուրայի
(դիպլոմավորված մասնագետի որակավորմամբ)
շրջանավարտ
_____-ից
անուն, հայրանուն, ազգանուն

հասցե՝ _____
_____
հեռ. _____
էլ. հասցե _____

Դ Ի Մ Ո Ւ Մ

Խնդրում եմ թույլ տալ մասնակցել 20 _____ - 20_____ ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելությանը _____
(Մասնագիտության անվանումն ու դասիչը)

մասնագիտությամբ՝ ըստ հետևյալ առաջնահերթության.

1) անվճար հիմունքներով
2) վճարովի հիմունքներով:

Կից ներկայացնում եմ անհրաժեշտ փաստաթղթերը և _____
_____
վերնագրով ռեֆերատ /հոդված/ (ընգծել):

ԴԻՄՈՂ՝ _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն

«_____» _____ 20 _____թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի
ռեկտոր՝ _____

_____

_____ ինստիտուտի
_____ թվականի մագիստրատուրայի
(դիպլոմավորված մասնագետի որակավորմամբ)
շրջանավարտ
_____-ից
անուն, հայրանուն, ազգանուն
հասցե՝ _____
_____
հեռ. _____
էլ. հասցե _____

Դ Ի Մ Ո Ւ Մ

Խնդրում եմ թույլատրել ինձ ձևակերպվել 20 _____ - 20_____ ուսումնական տարում որպես հայցորդ
_____
_____
(մասնագիտություն և ամբիոնի անվանումը)

Կից ներկայացնում եմ անհրաժեշտ փաստաթղթերը և _____ը վերնագրով ռեֆերատ /հոդված/ (ընգծել):

ԴԻՄՈՂ՝ _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն

«_____» _____ 20 _____թ.

Հավելված 2

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

ՑՈՒՑԱԿ

Հրատարակված գիտամեթոդական աշխատանքների

_____

_____

(ամբիոնը, մասնագիտությունը)

_____

(Դիմորդի անունը, հայրանունը, ազգանունը)

№	Անվանումը	Բնույթը	Ելքային տվյալները	Ծավալը	Համահեղինակները
1	2	3	4	5	6

Դիմորդ՝ _____

ստորագրություն

Հաստատում եմ

Գիտական քարտուղար

_____

ստորագրություն

«_____» _____20_____թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՌԵՖԵՐԱՏ

Թեմա՝ _____

Մասնագիտության դասիչ՝ _____

Մասնագիտություն՝ _____

Ամբիոն՝ _____

Կատարող՝ _____

Երևան 20 _____

Հավելված 4

ՀՖԿՍՊԻ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԳԻՏԱԿԱՆ ՌԵՖԵՐԱՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Գիտական ռեֆերատ ներկայացվում է ասպիրանտուրա դիմելու և հայցորդություն ձևակերպելու համար: Գիտական ռեֆերատը տրամաբանական կառուցվածք ունեցող ամբողջական, ինքնուրույն, ավարտուն հետազոտություն է: Գիտական ռեֆերատը պետք է ունենա առավելապես վերլուծական բնույթ:

Ռեֆերատը պետք է շարադրված լինի տպագիր և կազմի առնվազն 20 էջ:

Ռեֆերատի մեջ այլ աղբյուրներից տեքստերի, դրանց առանձին մասերի (մտքի, ձևակերպման, տվյալների, աղյուսակների և այլ տարրերի) օգտագործման դեպքում սկզբնաղբյուրին հղումը պարտադիր է:

Հղումներն պետք է տրվեն քառակուսի փակագծերում՝ նշելով գրականության ցանկի աղբյուրի համապատասխան համարը:

Գիտական ռեֆերատի կառուցվածքի հիմնական մասերն են.

1. **Տիտղոսաթերթ:**
2. **Համառոտագիր:** Համառոտագիրն աշխատանքի ընդհանրական ամփոփումն է: Այն ներկայացնում է հետազոտության հիմնական բովանդակությունը և ստացված արդյունքները: Համառոտագրում աղյուսակներ և գծապատկերներ չեն օգտագործվում, հղումներ չեն տրվում: Ներկայացվում է ռեֆերատի լեզվով:
3. **Ներածություն:** Այս բաժնում հիմնավորվում է հետազոտության արդիականությունը, նպատակը և խնդիրները, լուծման ուղիների և մեթոդների կիրառման նպատակահարմարությունը, ինչպես նաև ակնկալվող արդյունքը , նպատակահարմար է նշել ուսումնասիրվող ուղղությամբ կատարված հետազոտությունների արդյունքները: Ներածությունը պետք է արտահայտի թեմայի կիրառական նշանակությունը՝ ունենալով մեթոդաբանական և տեսական հենք:
4. **Գրականության ակնարկ:** Գրականության ակնարկը հետազոտության թեմայի վերաբերյալ գիտական գրականության ուսումնասիրությունն է և հետազոտության շրջանակներում արծածված խնդիրների լուծման ուղղությամբ այլ հետազոտողների կողմից մինչ այդ իրականացված հետազոտությունների ընդհանրացումը (հետազոտություններ, հոդվածներ, հրապարակումներ, թեզեր, մենագրություններ և այլն):
5. **Արդյունքների վերլուծություն:** Իրականացվում է հետազոտության առարկայի համակողմանի վերլուծություն, բացահայտվում են առարկայի փոփոխության միտումները, օրինաչափությունները, զարգացման ուղղությունները, կամ ստացված թվային տվյալների խորը և տրամաբանական վերլուծությունը, որոնք ամփոփում են հետազոտությունը՝ տեսական կամ կիրառական արդյունքների տեսքով: Ցանկալի է տեսական և հատկապես փորձարարական բնույթի աշխատանքներում ստացված արդյունքների ներկայացումը տրամագրերի, գծապատկերների, աղյուսակների ձևով:
6. **Եզրակացություն:** Հետազոտական աշխատանքի ամփոփիչ բաժինն է, որտեղ շեշտադրվում է ներածությունում նշված խնդիրների լուծումը: Խորհուրդ է տրվում կրկին անդրադառնալ հետազոտության իրականացման նպատակին, առաջադրված խնդիրներին՝ ստացված արդյունքի հետ դրանք համադրելու նպատակով:

Եզրակացության մեջ պետք է համառոտ և հստակ ամփոփել հետազոտական աշխատանքի բացահայտումները:

7. **Գրականություն:** Այն ամփոփում է հետազոտության ընթացքում օգտագործված գրականությունը: Օգտագործված գրականությունը տրվում է նաև հիմնական տեքստում՝ հղումների տեսքով: Աղբյուրները բերվում են բնօրինակի լեզվով: Նույն հեղինակի աշխատանքները պետք է դասավորել ըստ տարեթվերի աճման կարգի կամ ըստ շարադրանքի մեջ հղումների հերթականության: Պետք է գրել հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը, աշխատանքի լրիվ անվանումը, հրատարակչությունը, հրատարակման տեղը տարեթիվը, էջերի ընդհանուր թիվը կամ մշակված էջերը:

Տեխնիկական պահանջներ

A4 ֆորմատի համակարգչային շարվածքով հայերեն շարադրանք առանց տողադարձի (վերևից՝ 2սմ, ներքևից՝ 2 սմ, ձախից՝ 3 սմ, աջից՝ 1սմ, տառատեսակ՝ GHEA Grapalat, տառաչափ՝ 12, միջտողային տարածությունը՝ 1,5սմ): Ռուսերենի դեպքում՝ տառատեսակը Times New Roman:

Հավելված 5

ԱՍՊԻՐԱՆՏԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՏԱՌՈՎ	ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ
ԳԵՐԱԶԱՆՑ	A+	95-100
	A	90-94
ԼԱՎ	B+	85-89
	B	80-84
ԲԱՎԱՐԱՐ	C+	70-79
	C	60-69
ԱՆԲԱՎԱՐԱՐ	F	40-59
	FX	39-0
ՍՏՈՒԳՎԱԾ	S	60-100
ՉՍՏՈՒԳՎԱԾ	U	59 և ցածր

Հավելված 6

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՍՊԻՐԱՆՏ/ՀԱՅՑՈՐԴ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Թողարկող ամբիոն _____

Ուսուցման ձև _____

Ուսուցման սկիզբ _____

Ուսուցման ավարտ _____

Կարգավիճակ՝

ասպիրանտ / հայցորդ _____

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ասպիրանտի/հայցորդի

մասնագիտություն _____

Համաձայն ՀՀ ԲՈԿ-ի մասնագիտությունների անվանացանկի

Ատենախոսության թեմա _____

Լրացվում է թեման խորհրդում հաստատվելու հետո՝ նշելով ամսաթիվը և արձանագրության համարը

Դասիչ _____

Գիտական ղեկավար _____

Ազգանուն, անուն, հայրանուն, գիտական աստիճան, կոչում

Թեման և ղեկավարը
հաստատվել է _____

Հիմնարկի անվանում, ստորաբաժանման խորհուրդ, ամսաթիվ, արձանագրության համար

Բացատրագիր – հիմնավորում

ատենախոսության թեմայի ընտրության և կատարման

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ասպիրանտ/Հայցորդ _____

Ստորագրություն

Գիտական ղեկավար _____

Ստորագրություն

«Հաստատում եմ»
Գիտխորհրդի նախագահ
«_____» _____20_____թ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԼԱՆ

Աշխատանքի բնույթը	*Աշխատանքի ծավալը և բովանդակությունը*	*Կատարման ժամկետը (տարի)*					*Հաշվետվության ձև*
		I	*II*	*III*	*IV*	*V*	
1. Ուսումնական աշխատանք	Մասնագիտական քննության հանձնում						քննություն
2. Ուսումնական մոդուլներ							
3 Գիտական աշխատանք	1. Տեսական						
	2. Փորձարարական						
4. Ուսումնամեթոդական և մանկավարժական աշխատանք (պրակտիկաներ)							
5. Գիտական հոդվածների նախապատրաստում և հրապարակում							
6. Մեթոդական ձեռնարկների նախապատրաստում և հրապարակում							
7. Ատենախոսության ձևավորում և նախնական փորձաքննություն							

Ասպիրանտ _____

Գիտական ղեկավար _____

«_____» _____20_____թ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ 20____ - 20____ ուստարվա (_____ տարի)

Աշխատանքի բնույթը	*Աշխատանքի ծավալը և բովանդակությունը*	*Կատարման ժամկետը (ամիս)*	*Հաշվետվության ձև*
1. Ուսումնական աշխատանք	Մասնագիտական քննության հանձնում		քննություն
2. Ուսումնական մոդուլներ			
3 Գիտական աշխատանք	1. Տեսական		
	2. Փորձարարական		
4. Ուսումնամեթոդական և մանկավարժական աշխատանք (պրակտիկաներ)			
5. Գիտական հոդվածների նախապատրաստում և հրապարակում			
6. Մեթոդական ձեռնարկների նախապատրաստում և հրապարակում			
7. Ատենախոսության ձևավորում և նախնական փորձաքննություն			

Ասպիրանտ/հայցորդ _____ «_____» _____20____թ.
ստորագրություն

Գիտական ղեկավար_____ «_____» _____20____թ.
ստորագրություն

Ասպիրանտի ատեստավորում գիտ. ղեկավարի կողմից _____

_____

Ասպիրանտ/հայցորդ _____ ատեստավորված է

«_____» _____20____թ. ամբիոնի նիստի թիվ _____ արձանագրության որոշմամբ

Ամբիոնի վարիչ _____

Ատեստավորումը հաստատում եմ «_____» _____20____թ.

Ուսումնագիտ. աշխ. գծով պրոռեկտոր

Ասպիրանտուրայում ուսումնառության արդյունքները

Ասպիրանտ/հայցորդ _____

(անուն, հայրանուն, ազգանուն)

լրիվ կատարել է աշխատանքային պլանը և անցել ատենախոսության նախնական փորձաքննությունը

Ընդգծել.

1. Երաշխավորել մասնագիտական խորհուրդ ներկայացնել հրապարակային պաշտպանության
2. Վերանայելուց հետո մասնագիտական խորհուրդ ներկայացնել հրապարակային պաշտպանության

Ինստիտուտի ռեկտոր _____

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր _____

Հավելված 7

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՍՊԻՐԱՆՏ/ՀԱՅՑՈՐԴ

_____

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ի ԿՈՒՐՍ

ԱՍՊԻՐԱՆՏԻ/ՀԱՅՑՈՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Թողարկող ամբիոն _____

Ուսուցման ձև _____

Ուսուցման սկիզբ _____

Ուսուցման ավարտ _____

Կարգավիճակ՝

ասպիրանտ / հայցորդ _____

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Ասպիրանտի/հայցորդի

մասնագիտություն _____

Համաձայն ՀՀ ԲՈԿ-ի մասնագիտությունների անվանացանկի

Ատենախոսության թեմա _____

Լրացվում է թեման խորհրդում հաստատվելու հետո՝ նշելով ամսաթիվը և արձանագրության համարը

Դասիչ _____

Գիտական ղեկավար _____

Ազգանուն, անուն, հայրանուն, գիտական աստիճան, կոչում

Թեման և ղեկավարը

հաստատվել է _____

Հիմնարկի անվանում, ստորաբաժանման խորհուրդ, ամսաթիվ, արձանագրության համար

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

20_____ - 20_____ ուստարվա (_____ տարի)

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

N	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐ	ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿՐԵԴԻՏ	ԿՈՒՏԱԿԱԾ ԿՐԵԴԻՏ	ԳՆԱՀԱ-ՏԱԿԱՆ	ԿԻՍԱՄՅԱԿ	ՆՇՈՒՄՆԵՐ
1						
2						
3						

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

	Նախատեսված աշխատանքը	Աշխատանքի համառոտ նկարագրությունը/ բովանդակությունը	Կատարման ժամկետը	Նախատեսված կրեդիտ	Կուտակած կրեդիտ	Նշումներ
1.	Ատենախոսության շրջանակում կատարվող աշխատանք	Տեսական-				
		Փորձարարական-				
2.	Պրակտիկա					
3.	Գիտաժողովի նյութերում, գիտական ամսագրերում հրատարակումներ					

Թողարկող ամբիոնի վարիչ _____ _____

Անուն, ազգանուն Ստորագրություն

Ասպիրանտի/Հայցորդի 1-ին տարում կուտակած կրեդիտների քանակը՝ ____:

Ասպիրանտին/Հայցորդին տեղափոխել հաջորդ կուրս /_____

ամբիոնի 20__ թ. _____, N_____ արձանագրություն/

Հավելված 8

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՍՊԻՐԱՆՏԻ/ՀԱՅՑՈՐԴԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ/ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԼԱՆ

Ասպիրանտ/հայցորդ (Ա.Ա.Հ.) _____

Մասնագիտություն, դասիչ _____ Կուրս _____

Պրակտիկայի ղեկավար _____

Անցկացման վայրը _____

Անցկացման ժամկետը _____

Պրակտիկայի անցկացման նպատակը

_____

_____

№	Անցկացվող աշխատանքների կատարման ժամկետը և վայրը	Աշխատանքի հակիրճ բովանդակությունը

Ասպիրանտ/հայցորդ՝ _____ _____

Անուն, ազգանուն Ստորագրություն

Գիտական ղեկավար՝ _____ _____

Անուն, ազգանուն Ստորագրություն

Պրակտիկայի ղեկավար՝ _____ _____

Անուն, ազգանուն Ստորագրություն

Թողարկող ամբիոնի վարիչ՝ _____ _____

Անուն, ազգանուն Ստորագրություն

Պրակտիկայի պատասխանատու՝ _____ _____

Անուն, ազգանուն Ստորագրություն

Հավելված 9

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՍՊԻՐԱՆՏԻ/ՀԱՅՑՈՐԴԻ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ/ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ասպիրանտ/հայցորդ (Ա.Ա.Հ.) _____
Մասնագիտություն, դասիչ _____ Կուրս
_____

Պրակտիկայի ղեկավար _____
Անցկացման վայրը _____
Անցկացման ժամկետը _____
Պրակտիկայի անցկացման նպատակը
_____
_____

№	Աշխատանքի հակիրճ բովանդակությունը	Նշում կատարման մասին

Հավելյալ տեղեկատվություն
_____
_____

Կուտակած կրեդիտներ _____
Գնահատական _____

Ասպիրանտ/հայցորդ՝ _____ (Անուն, ազգանուն) _____ (Ստորագրություն)

Գիտական ղեկավար՝ _____ (Անուն, ազգանուն) _____ (Ստորագրություն)

Պրակտիկայի ղեկավար՝ _____ (Անուն, ազգանուն) _____ (Ստորագրություն)

Թողարկող ամբիոնի վարիչ՝ _____ (Անուն, ազգանուն) _____ (Ստորագրություն)

Պրակտիկայի պատասխանատու՝ _____ (Անուն, ազգանուն) _____ (Ստորագրություն)

Հավելված 10

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

Բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» Հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ)՝ ի դեմս ռեկտոր Տիգրան Սիմոնյանի մի կողմից, և ասպիրանտուրայի դիմորդ (այսուհետ՝ դիմորդ) ը մյուս կողմից, ովքեր ստորև հիշատակվում են որպես «կողմ» և միասին՝ որպես «կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի իրավական հիմքերը

Սույն պայմանագրի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի N 662 որոշումը, Ինստիտուտի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտեր:

2. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրի առարկան Ինստիտուտում ուսումնառության իրականացման, ինչպես նաև ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետին աշխատանքի տեղավորելու պայմաններն են:

3. Կողմերի պարտավորությունները և իրավունքները

3.1. Ինստիտուտը պարտավորվում է՝

3.1.1. մրցույթի արդյունքում ընդունված դիմորդին ղեկավարի հրամանով ձևակերպել որպես ասպիրանտ՝ նշելով ասպիրանտուրայում ուսուցման (առկա, հեռակա) և ֆինանսավորման (անվճար, վճարովի) ձևերը, տարկետման իրավունքը (տարկետման իրավունքով, առանց տարկետման իրավունքի),

3.1.2. դիմորդի հրամանագրման օրվանից ոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում՝ սահմանված կարգով հաստատել ատենախոսության թեման և գիտական ղեկավար,

3.1.3. ասպիրանտուրայում ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար՝ սահմանված կարգով հաստատել ասպիրանտի աշխատանքային պլանը,

3.1.4. դիմորդի համար ասպիրանտուրայում ուսումնառության տարիներին ստեղծել գիտակրթական գործընթացն ապահովող անհրաժեշտ բոլոր պայմանները,

3.1.5. առկա ուսուցմամբ դիմորդին տարեկան մեկ անգամ՝ ուսումնական տարվա վերջին տրամադրել երկամսյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ,

3.1.6. աշխատանքային պլանին համապատասխան՝ ներկայացված հաշվետվության հիման վրա յուրաքանչյուր տարի ատեստավորել ասպիրանտին,

3.1.7. ուսումնական պլանները կատարած և ամփոփիչ ատեստավորումն անցած ասպիրանտին շնորհել համապատասխան որակավորում և տալ ավարտական փաստաթուղթ,

3.1.8. պետական պատվերի շրջանակներում ընդունված դիմորդին ուսումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում տեղավորել աշխատանքի համապատասխան մասնագիտությամբ՝ կրտսեր գիտական աշխատողի (կամ ասիստենտի) պաշտոնում՝ առնվազն 3 տարի ժամկետով:

3.2. Ինստիտուտն իրավունք ունի՝

3.2.1. ատեստավորում չանցած ասպիրանտին ղեկավարի հրամանով ազատելու ասպիրանտուրայից,

3.2.2. լուծելու աշխատանքային պայմանագիրը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

3.3. Դիմորդը պարտավորվում է՝

3.3.1. պահպանել Ինստիտուտի կանոնադրությունը և ներքին կանոնները,

3.3.2. Ինստիտուտի Գիտական Խորհրդի հաստատմանը ներկայացնել ասպիրանտի աշխատանքային պլանը,

3.3.3. ասպիրանտի աշխատանքային պլանին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի ներկայացնել հաշվետվություն,

3.3.4. սահմանված կարգով հանձնել որակավորման քննությունները:

3.4. Պետական պատվերի շրջանակներում ընդունված դիմորդը պարտավոր է ուսումն ավարտելուց հետո առնվազն 3 տարի աշխատել Ինստիտուտում:

3.5. Պետական պատվերի շրջանակներում ուսումն ավարտելուց հետո աշխատանքից հրաժարվելու դեպքում դիմորդը պարտավորվում է Ինստիտուտին փոխհատուցել ուսումնառության տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իր վրա ծախսված գումարը:

3.6. Դիմորդն իրավունք ունի՝

3.6.1. տարեկան մեկ անգամ՝ ուսումնական տարվա վերջին ձևակերպելու երկամսյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ,

3.6.2. գիտական հետազոտություններ կատարելիս՝ Ինստիտուտի աշխատողների հետ հավասարապես օգտվելու գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարանից, գործուղումների իրավունքից, հանրակացարանից:

4. Ուսման վճարի չափը և վճարման կարգը (վճարովի հիմունքներով սովորողների համար)

4.1. Վճարովի հիմունքներով սովորող ասպիրանտի ուսման վարձը սահմանվում է _____դրամ:

4.2. Ուսման վարձի չափը սահմանվում է ասպիրանտի ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար:

4.3. Ուսման վարձը վճարվում է կանխիկ կամ փոխանցման կարգով՝ բանկում կազմակերպության բացած հաշվարկային հաշվին:

4.4. Ասպիրանտուրայից ազատվելու դեպքում վճարված ուսման վարձը ենթակա չէ վերադարձման:

5. Պայմանագիրն ուժի մեջ մտնելը և դրա գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է ասպիրանտուրայի կրթական ծրագրով նախատեսված ամբողջ ժամանակահատվածի համար՝ բացառությամբ սույն պայմանագրի 6-րդ բաժնում նշված դեպքերի:

6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

6.1. Սույն պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման՝

6.1.1. ասպիրանտի կողմից տարբեր պատճառներով Ինստիտուտում ասպիրանտուրայի գիտակրթական գործընթացի ընդհատման,

6.1.2. ասպիրանտի կողմից աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների չկատարման,

6.1.3. ասպիրանտի կողմից սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական պայմանների խախտման,

6.1.4. Ինստիտուտի կողմից սույն պայմանագրով նախատեսված գիտակրթական գործընթացի չապահովման, ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետին համապատասխան մասնագիտությամբ աշխատանքի տեղավորելու պայմանների խախտման դեպքերում:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից, որոնցից մեկական օրինակ ի պահ է հանձնված կողմերին:

7.2. Կողմերի միջև ծագած վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Կողմերի գտնվելու, բնակության վայրերը, ստորագրությունները և այլ տվյալներ

ԻՆՍՏԻՏՈՒՏ	ԴԻՄՈՐԴ
«ՀՖԿՍՊԻ» Հիմադրամ Երևան, Ալեք Մանուկյան 11 հ/հ 163038103145 ՀԱՅԷԿՈՆՈՄ ԲԱՆԿ ՀՎՀՀ 01505821	
Ռեկտոր _____	
Կ.Տ.	
ք. Երևան	-- -- 202- թ.

Հավելված 11

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ
(հայցորդի)

ք.Երևան «___»_____20___

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ), ի դեմս ռեկտոր _____ մի կողմից, ով գործում է կանոնադրության հիմնան վրա, և _____ _____(այսուհետ Հայցորդ՝ մյուս կողմից, ովքեր ստորև հիշատակվում են որպես «կողմ» և միասին՝ որպես «կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի իրավական հիմքերը

Սույն պայմանագրի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի N 238-Ն որոշումը, Ինստիտուտի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտեր:

2. Պայմանագրի առարկան

2.1. Սույն պայմանագրի առարկան Հայցորդի հետբուհական կրթական ծրագրով վճարովի հիմունքներով Ինստիտուտում ուսումնառության իրականացման ակադեմիական և ֆինանսական կարգն ու պայմաններն են:

Ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված քննությունը (քննությունները) և ստուգարքը (ստուգարքները) (այդ թվում՝ մասնագիտական քննությունը) հանձնած, համապատասխան կրեդիտներ կուտակած հայցորդն իրավունք ունի ավարտի ատենախոսությունը և Ինստիտուտում անցկացնի ատենախոսության նախնական քննարկում:

2.2.Հայցորդության համակարգում գործում է հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված կրեդիտային համակարգը:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1.Ինստիտուտը պարտավորվում է՝

3.1.1. դիմորդին Ինստիտուտի հաստատված կարգով ռեկտորի հրամանով ձևակերպել որպես հայցորդ՝ նշելով ամբիոնը և ֆակուլտետը (թեման և գիտական ղեկավարը հաստատելուց հետո) և ֆինանսավորման ձևը,

3.1.2. ապահովել ուսուցումը _____ ամբիոնի և հայցորդի կողմից կազմված աշխատանքի և անհատական պլանի համաձայն:

3.1.3. ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար, սահմանված կարգով հաստատել հայցորդի աշխատանքային պլանը,

3.1.4. ապահովել անհրաժեշտ պայմաններ տեսական և գործնական արդյունավետ ուսուցման համար, ստեղծել գիտակրթական գործընթացն ապահովող և ատենախոսության վրա աշխատելու համար ստեղծել անհրաժեշտ բոլոր պայմանները:

3.1.5 աշխատանքային պլանին համապատասխան՝ ներկայացված հաշվետվության հիման վրա յուրաքանչյուր տարի ատեստավորել հայցորդին:

3.2. Ինստիտուտն իրավունք ունի՝

3.2.1. Հայցորդին ազատել հայցորդությունից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ատեստավորումը չանցնելու դեպքում:

3.2.2. Ազատել Հայցորդին ուսման վարձավճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում:

3.3.Հայցորդը պարտավորվում է.

3.3.1. պահպանել Ինստիտուտի կանոնադրությունը, ներքին կարգապահական և էթիկայի կանոնները,

3.3.2. համագործակցել ատենախոսության ղեկավարի հետ,

3.3.3. սահմանված ժամկետներում և պատշաճորեն կատարել անհատական պլանով նախատեսված աշխատանքները և հանձնել մասնագիտական քննություն՝ ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եվ գիտության կոմիտեի կողմից հաստատված կարգին համապատասխան,

3.3.4. սահմանված ժամկետում վճարել ուսման վարձավճարը:

3.4. Հայցորդ իրավունք ունի.

3.4.1. գիտական հետազոտություններ կատարելիս օգտվել գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գործուղումների իրավունքից և գրադարանից:

3.4.2. մասնակցել Ինստիտուտում գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին և համաժողովներին:

4. Ֆինանսական պայմաններ

4.1. Հայցորդի ուսման վճարը յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է _____ (_____) ՀՀ դրամ, ընդհանուրը՝ _____ (_____) ՀՀ դրամ:

4.2.Կողմերը պայմանավորվում են, որ Հայցորդն ուսման վճարը կարող է մուծել ըստ կիսամյակների: Ուսման առաջին տարվա համար վճարումը կատարում է մինչև 20___թվականի _____-ը:

4.3.Ուսման վարձի չափը սահմանվում է հայցորդի ուսումնառության տարիների համար և այն կայուն է հայցորդի ուսումնառության ողջ ժամանակահատվածի համար:

4.4. Հեռացված և, այնուհետև, սահմանված կարգով վերականգնված Հայցորդի հետ կնքվում է նոր պայմանագիր և Հայցորդը վճարը մուծում է նոր պայմանագրով նախատեսված չափով և կարգով:

4.5. Մուծված ուսման վճարը ենթակա չէ վերադարձման, բացառությամբ առողջական վիճակի պատճառով ուսումն ընդհատելու դեպքի: Վերադարձման ենթակա գումարը պետք է համապատասխանի ուսուցում չանցած ժամկետին:

5.Պայմանագրի գործողության ժամկետը և լուծման հիմքերը

5.1.Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է հայցորդության ամբողջ ժամանակահատվածի համար՝ բացառությամբ սույն պայմանագրի 5.2. կետում նշված դեպքերի:

5.2. Սույն պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծվել հետևյալ դեպքերում՝

5.2.1 հայցորդի կողմից տարբեր պատճառներով Ինստիտուտում գիտակրթական գործընթացի ընդհատման,

5.2.2. հայցորդի կողմից աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների չկատարման,

5.2.3. հայցորդի կողմից սույն պյամանագրով նախատեսված ֆինանսական պայմանների խախտման,

5.2.4. Հայցորդի թեկնածուական ատենախոսության նախապաշտպանությամբ կամ հայցորդությունից ազատման:

5.3. Պայմանագրի գործողության ժամկետ է սահմանվում «___»_____20___ թվականից մինչև «___»_____20_____ թվականը:

6.Եզրափակիչ դրույթներ

6.1. Մասնագիտական քննություն հանձնելու և ատենախոսությունն ավարտելու համար Հայցորդին հատկացվող առավելագույն ժամկետը 5 (հինգ) տարի է:

6.2. Հայցորդի կարգավիճակով լրիվ ժամկետ անցած անձինք երկրորդ անգամ չեն կարող օգտվել նույն մասնագիտությամբ հայցորդ ձևակերպվելու իրավունքից:

6.4. Կողմերի միջև ծագած վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

6.5.Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները՝

ԻՆՍՏԻՏՈՒՏ	ՀԱՅՑՈՐԴ
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	Ա.Ա.Հ._____
Երևան, Ալ. Մանուկյան փ. 11,	_____
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	անձն. ____ N _____
ՀՀ 1630381036145	տրված «_____»_____ ___կոդ _____
ՀՎՀՀ 01505821	հասցե_____
Ռեկտոր՝ _____	_____
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	